Աբու Զահիդ Ալի Մուսայի՝ «Ներպաղեստինյան քննարկումներն ու հակասությունները իսրայելա-պաղեստինյան դիսկուրսի համատեքստում» ատենախոսության վերաբերյալ

ԿԱՐԾԻՔ

Աբու Զահիդ Ալի Մուսայի՝ «Ներպաղեստինյան քննարկումներն ու հակասությունները իսրայելա-պաղեստինյան դիսկուրսի համատեքստում» վերտառությամբ ատենախոսության թեման բավական արդիական է՝ հաշվի առնելով դեռևս շարունակվող պաղեստինա-իսրայելական հակամարտությունն ու դրա ազդեցությունը մերձավորարևելյան տարածաշրջանային և արտատարածաշրջանային գործընթացների վրա: Այդ առումով կարևոր է հասկանալ ներպաղեստինյան քննարկումների և հակասությունների տրամաբանությունն ու դինամիկան, որը լրացուցիչ լույս է սփռում հակամարտության վերաբերյալ իսրայելա-պաղեստինյան դիսկուրսի վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում են ատենախոսության իրականացման մեթոդաբանությունը, թեմայի արդիականությունը, հետազոտական խնդիրներն ու նպատակը, հիմնավորվում է ընտրված ժամանակահատվածը, տրվում է օգտագործված գրականության վերլուծություն:

«Պաղեստինի ազատագրման կազմակերպության» (ՊԱԿ) և «Պաղեստինի ազգային ազատագրական շարժման» («Ֆաթհ») ստեղծումն ու զարգացումը. հայացք ներսից» վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: Այստեղ հեղինակը անդրադարձ է կատարում պաղեստինյան հիմնախնդրի առաջացման պատմական նախադրյալներին, ներկայացվում են «Պաղեստինի ազատագրության կազմակերպության» ստեղծումն ու դրա նկատմամբ այդ ժամանակաշրջանի արաբական շարժումների և կուսակցությունների, ինչպես նաև պաղեստինյան քաղաքական համակարգի և որոշման ընդունման մեխանիզմների

նկատմամբ ՊԱԿ-ի դիրքորոշումները: Բացի այդ, անդրադարձ է կատարվում «Ֆաթհ»-ի ստեղծման նախադրյալներին ու հետագա գործունեությանը:

««Համաս» շարժում · ստեղծումն ու գաղափարախոսությունը, «Համաս»-ի և «Ֆաթհ»-ի միջև բախումը» վերտառությամբ երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից: Այս գլխում հեղինակը ներկայացնում է «Համաս» շարժման ստեղծումը, գաղափարախոսական հիմնադրույթները, գործունեությունը, նպատակներն ու փոխակերպումները: Հեղինակն այս գլխում խոսում է նաև «Համաս»-ի՝ մերձավորարևելյան խաղաղության գործընթացի վերաբերյալ դիրքորոշման և շարժման ներսում նկատվող ներքին հակասությունների մասին:

Այստեղ հեղինակը ներկայացնում է նաև «Ֆաթհ» և «Համաս» շարժումների տարաձայնությունների առաջացման պատճառները, հակամարտության կարգավորման վերաբերյալ նրանց վերաբերմունքը:

Երրորդ գլխում, որը վերնագրված է՝ «Պաղեստինյան հասարակական-քաղաքական կարծիքը ներպաղեստինյան խնդիրների և պաղեստինյան պետության ապագայի վերաբերյալ», հեղինակը ներկայացնում է Իսրայելում մի շարք արաբ քաղաքական առաջնորդների շրջանում իրականացված հարցումներ, խոսում է իսրայելաբնակ արաբների կողմից ստեղծված որոշ քաղաքական կուսակցությունների, դրանց ծրագրերի, նպատակների և «Համաս»-ի ու «Ֆաթհ»-ի հարաբերությունների վերաբերյալ դրանց դիրքորոշումների մասին: Այս գլխում հեղինակն անդրադառնում է նաև «Համաս»-ի, «Ֆաթհ»-ի և պաղեստինյան քաղաքական ուժերի միջև տարաձայնություններին, պաղեստինյան հիմնախնդրի վրա ունեցած բացասական ազդեցությանը՝ ներկայացնելով մի շարք արաբ քաղաքական առաջնորդների շրջանում իրականացված հարցման արդյունքներ և ներպաղեստինյան ճգնաժամի հաղթահարման, հակասությունների հարթման և ապագա հնարավոր զարգացումների վերաբերյալ որոշ դիտարկումներ:

«Երուսաղեմի հիմնախնդիրն ու դրա շուրջ միջազգային, արաբական և ներպաղեստինյան դիսկուրսը» վերտառությամբ չորրորդ գլխում հեղինակը անդրադառնում է Երուսաղեմ քաղաքի առանձնահատկություններին, ԱՄՆ մի շարք նախագահների Երուսաղեմի առնչությամբ որոշումներին, ԱՄՆ նախագահ Թրամփի կողմից Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու և ԱՄՆ դեսպանությունն

այնտեղ տեղափոխելու վերաբերյալ որոշման դրդապատճառներին, հետևանքներին, այդ համատեքստում պաղեստինյան և Իսրայելի որոշ բարձրաստիճան պաշտոնյաների, մերձավորարևելյան մի շարք առանցքային երկրների դիրքորոշումներին, ՄԱԿ-ի և Եվրամիության արձագանքներին, իսրայելաբնակ որոշ քաղաքական, մշակութային և հասարակական գործիչների վերաբերմունքին:

Ատենախոսության վերջում ներկայացվում են հիմնական եզրահանգումներն ու օգտագործված գրականության ցանկը:

Այնուհանդերձ, ներկայացված ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնցից կնշենք հետևյալները՝

1. Աշխատանքը զերծ չի մնացել անվանումների և տերմինների կիրառման անճշտություններից: Օրինակ՝ 14-րդ էջում նշվում է Թուրքիա, Օսմանյան կայսրության փոխարեն, կամ՝ Անգլիա, այնուհետև նույն էջում Մեծ Բրիտանիա և այլն: Աշխատանքի 30-րդ էջում նշվում է՝ Մահմուդ Աբբաս, 142-րդ էջում՝ Մահմուդ Աբաս և այլն, վերջինս հավանաբար արաբերենի յուրահատկության և թարգմանության արդյունք կարող է լինել:

2. Առկա են բացթողումներ, վրիպակներ, հղումների միատարրության և այլ շարադրման խախտումներ: Մասնավորապես 35 էջում հեղինակը խոսում է «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության, նրա հիմնադրի ու հիմնադրման մասին, սակայն նույն կազմակերպության, նրա հիմնադրի և այլնի մասին դարձյալ 48 էջի տողատակում է խոսվում: 36 էջի 45-րդ տողատակում մուսուլմանական ումմայի բացատրություն է տրվում, նշելով՝ «համայնքը», 49-րդ էջի 65-րդ տողատակում դարձյալ բացատրվում է ումման որպես «իսլամական համայնք» և այլն:

3. Հեղինակը 16-17 էջերում հպանցիկ անդրադառնում է 20-րդ դարի սկզբում Պաղեստինում ստեղծված իրավիճակին, Բալֆուրի հռչակագրին, պաղեստինցիների դիմակայություններին ու հեղափոխական գործողություններին, երկու պետություններ ստեղծելու 1947 թ. ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի բանաձևին՝ այդ ժամանակահատվածում առկա պաղեստինյան իրողությունները հիմնականում բնորոշելով որպես Մեծ Բրիտանիայի կողմից իրականացվող գաղութատիրական

քաղաքականության և սիոնիստական ծրագրերի իրականացման արդյունք: Սակայն հաշվի առնելով նաև ատենախոսության թեման, ցանկալի կլիներ աշխատանքի այս հատվածում հեղինակը ներկայացներ նաև ներպաղեստինյան դիրքորոշումներում առկա տարբեր մոտեցումները (Պաղեստինի տարածքում հրեաների բնակեցում, նրանց կողմից պաղեստինցիներից հողերի և տարածքների գնում և այլն), քանզի այդ իրավիճակը ստեղծվել էր նաև առկա տարբեր մոտեցումների հետևանքով:

4. Բոլորովին կապ չենք տեսնում աշխատանքի 4-րդ գլխի «Դ. Թրամփի որոշման նկատմամբ միջազգային դիրքորոշումները» վերտառությամբ 4.7 ենթագլխում արված դիտարկումների և նույն ենթագլխի վերջին պարբերության միջև: Մասնավորապես այս հատվածում հեղինակը խոսում է 2006 թ. օրենսդրական մարմնի ընտրություններին «Համաս» շարժման մասնակցելու ցանկության և ԱՄՆ ներկայացուցիչների պալատի 2005 թ. այդ մասնակցության վերաբերյալ նախազգուշացման որոշման մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները, սակայն, չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքները: Աբու Զահիդ Ալի Մուսայի՝ «Ներպաղեստինյան քննարկումներն ու հակասությունները իսրայելա-պաղեստինյան դիսկուրսի համատեքստում» ատենախոսությունը ինքնուրույն աշխատանք է: Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները, ինչպես նաև ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված են և ընդունելի: Լինելով ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, ատենախոսությունը հագեցած է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն ունեցող նյութերով:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ և ընկալելի ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Աբու Զահիդ Ալի Մուսայի՝ «Ներպաղեստինյան քննարկումներն ու հակասությունները իսրայելա-պաղեստինյան դիսկուրսի համատեքստում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Գրիգորյան

ԵՊՀ գիտքարտուղար Ս. Կոստանդյան

Երևան, 15 հունիսի, 2022 թ.